ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ ԴՐԱՄ
ՂՐԿԵԼՈՒ ՀԱՍՑԷ
M. BENIARD.
22, Ormiston Road,
Shepherd's Bush.
London, W. (Angleterre)

Ամեն բան ժողովրդի միջոցով, ժողովրդի կամքով եւ ժողովրդի համար:

Իւրաքանչիւրի եւ ընդհանուրի հաւասարապէս բարեկեցիկ կեանք — դա է ճշմարիտ ազատութիւն:



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ
ՏԱՐԵԿԱՆ . . . . . 5 ֆր.
ԿԷՍ ՏԱՐԻԱՆ . . . 3 „
ՄԻ ՀԱՄԱՐԸ . . . ½ „

Ժողովուրդ, Էդու ինքդ միայն կարող ես ձեռք բերել քո ազատութիւնը:

Արեան ճահիճներ — ահա ազատութեան ճանապարհը:

Ժողովուրդ, մի աղերսիր այլ պահանջիր եւ ձեռք բեր:

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ—ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ	ԼՕՆԴՕՆ	Nr 9. ՅՈՒՆՎԱՐ. Nr 9.	1895	ՄԻԱՄՍԵԱՅ

ՍՈՒՐԲ ԴԱՇԻՆՔ.

ՈՒՈՒՍԻԸ. (Միւս տէրութիւններին, բացի Թիւրքիայից). — Տեղերդ կացէք. չեմ թոյլ տալ, որ գնաք իմ բարեկամիս դէմ: (Թիւրքիային). Իսկ քեզ, բարեկամ, ձեռքս եմ մեկնում և այս դաշինքիս պայմանն ահա. — թոյլ կը տամ քեզ կոտորել այդ ծնկաչոք կնկայ բոլոր զաւակներին, բայց նրան և իր երկու քոյրերին քո հարէմից պէտք է վերցնեմ ինձ համար:

ԱՐՋԸ.

Սառնամանիքներից միշտ պաղ է փչում։ Հիւսիսային արջն ոռնալն անտանելի կերպով տիրել է ամբողջ Եւրոպային։ Այժմ նա է, որ ուզում է լինել տէր ամէն տեղ։ Խեղդած իր երկրի ներսն ամէն ազնիւ ձայն ու միտք, սիրահարվածի մարող աչքերով խոցած Ֆրանսուհու սիրտը, Բոլգարիայի իշխանին կապած իր ագիին և նստած արքայական տեղը սուլթանների հարէմում —այդ արջն այսօր ամէն տեղ իր թաթն է խոթել, այդ „բարեկամ“ տէրութիւնների արտաքին գործերում, որպէս և քաղաքական ներքին կեանքում։

Նա միացաւ սուլթանի հետ, դեռ Սասունի դէպքի ժամանակից սկսած, որպէսզի խողխողել ու կոտորել տայ հայերին Թիւրքիայում։ Արդեօք ամենաստոր ցինական մի յայտարարութիւն չէ՞, որ արաւ Օդէսսայում մի ռուս զինուորական բարձրաստիճան պաշտօնեայ իր խօսակցութեան մէջ անգլիական մի լրագրի թղթակցի հետ։ „Որքան քիչ լինեն այդ տարրերը (հայերը), այնքան օգտակար կը լինի“ —դրանք մի պաշտօնեայի խօսքեր են, դրանք մի հզօր կառավարութեան ստորութիւններն են դէպի մի փոքրիկ ազգ, որի կէսը գանվում է նոյն այդ տէրութեան իշխանութեան տակ։ Հայաստանի գարնան վարդերը չէ՞ն, որ կարող կը լինեն ծաղկել հիւսիսային մեծամեծների այդ պաղ քամիի տակ։

Սպիտակ արջն ակռաներն է սրել ընդդէմ ինքնավար Հայաստանի։ Նա չէ ուզում ունենալ „երկրորդ Բոլգարիա“։ Նա ատում է հայ յեղափոխականին։ Նա ուզում է, որ Հայաստանն իրանը լինի, միմիայն իրանը։

Օ, սո՞ւրբ դաշինք սլավո-մահմեդական։ Այդ երկու միապետութիւններն այսօր իրար այնպէս կպել ու միացել են, ինչպէս առուն իր ափերին։ Ինչ երջանկութիւն է խոստացվում Աստուծին այդ փափուկ սիրուց երկու վամպիրների, որ իրանց ըղձանկները խրել են իրանց ժողովրդների մսերի մէջ։ Բոսֆո՞ր —նա պէտք է լինի ռուսական ջրանցք։ Դարդանէ՞լ —նա հարկաւոր է Ռուսաստանին, որ սա չը մնայ իր Սև ծովում, ինչպէս մի լճում։ Հայաստա՞ն— նա արդէն աշխարհագրական կերպով Ռուսաստանի „մի մասն է կազմում,“ մնում է միայն միացնել նրան նաև վարչական ու կառավարական կերպով ևս։ Դրա հետ միասին, ի հարկէ, նաև ամբողջ Փոքր-Ասիան։

Դրանք են Ռուսաստանի երազները, որ նրա անմիջական մի գործողութեան են կարօտ իրականութիւն դառնալու համար։

Եւ այդքա՞ն բանի համար ինչո՞ւ չը համբուրվել սուլթանի հետ, սրա գրպանից ծածկաբար գողանալու համար այդ համեղ կտորները։ Տեղե՞րդ կացէք, եւրոպական տխմա՞ր տէրութիւններ. բռնապետներիս սուրբ միութիւնն է հաստատվում հայերի արեան ու կրպստի գնով. որ ո՛չ մէկը ձեզնից չը խանգարէ արջին կատարել իր „պատմական“ դերը։

Եւ Եւրոպան մի՞ ցել է անմռունչ...Ինչ գառնուկ է կեղծաւոր Սոլզբերին. Ինչ ապուշ ասպետ է ռոմանտիկական Գրանսիան։

Եւ Ռուսաստանի վրայ արևը փայլելիս Հայաստանի վրայ միևնոյն ժամանակ արեան անձրև է գալիս... Բանը նրանումն է, որ երբ արև ժամանակ արեան անձրև է թափվում, այլ ևս գայլը չէ, որ ծնում է, այլ արջը։ Արջը ծնում է աշխարհիս ամենահրէշաւոր էակին։ Թո՛ղ վերցնէ լաւ մանկաբարձ... Ծնունդը տանջալի կը լինի... Մանաւանդ որ դեռ բոլոր հայերը չէն կոտորված ամբողջովին։

Եւ այդ պարագայում արջը չէ, որ կարող կը լինի երաշխաւորել, թէ հայ յեղափոխականը մի նոր ընթացքով չի դնիլ արքելք արջի յաւակնութիւններին, որոնք բոլորովին բնական լինելով հանդերձ, այնուամենայնիւ չեն դադարում առաջի մնալ յաւակնութիւններ և միմիայն յաւակնութիւններ։

Ամէն շնչող մեռնում է մէկ անգամ...
Հայը դեռ չը մեռաւ։

ԱՐԵՒԱԾԱԳԻՆ

ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

ՆՈՒԻԷՐ ՏԻԿԻՆ Մ. Ն...ԻՆ

(Շարունակութիւն) [1])

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

XII

Ժամացոյցի աշտարակից քիչ վեր, Թիւրքական բաղնիքի կից շինված մէկ անշուք շէնքի նեղ սենեակում ցածր բազմոցների վրայ նստել էին մի քանի մարդիկ. իրանց գլուխները ծածկված էին կէս կոնաձև համիդիէ կարմիր ֆէսերով։ Մի քանիսները հագել էին պաշտօնական զգեստ. նրանց մի քանիսի կուրծքերի աջ կողմի վրայ փայլում էին սուլթանի սատագաթի, մէջիդիէի և այլ նշաններ։ Միւսները պէնդ կոխած իրանց բերանում նարգիլէյի մարբօճի արծաթեայ ծայրերը, իրանց թոքերի բոլոր ուժով քարշում էին, որոնց կըլկըլոցը մեծ հաճոյք էր պատճառում բէկ էֆէնդիներին. վերջապէս մեացածներն էլ կուշտկուշտ կուլ էին տալիս Բաֆրայի անուշահոտ և ընտիր ծխախոտի ծուխը։ Մին գովում էր իր ձին, մէկ ուրիշը պատմում էր իր երէկւայ քէֆի և խմած արաղի քանակութեան մասին։ Անկիւններից մէկում նստած էֆէնդին գովում էր իր ծխախոտը, մէկ ուրիշն էլ իր տանն ունեցած Նարգիլէի մարբօճը...Նրանց անընդատակ խօսակցութիւնները միախառնվելով, կազմում էին մի փեթակի վժվժոց. ոչ մէկն էլ չէր հասկանում իր ընկերների խօսակցութիւնները, քանի որ ամենքն էլ խօսող էին և լսող չը կար. չը նայելով այս խառնաշփոթութեան, միաժամանակ ամենքն էլ իրար գլուխ էին տալիս և „բէլի, բէլի“ (այո՛, այո՛) էին կրկնում։

Դերս մտաւ մի երիտասարդ, իսոր կերպով մէջքը ծռեց, մեկնեց իր աջ ձեռքը մինչև գետին, յետոյ դնելով բերանին և ճակատին՝ տրվեց տաճկական բարևը „սէլամն ալէյքում“ և կողքի վրայ յետ-յետ գնալով, նստեց բազմոցի մի ծայրին. ամենքն էլ կարգով բարևեցին նրան և „մերհաբա“ ասացին։ Նաղըմ բէկը, որ բազմոցի գլխի անկիւնում նստած տ քտաք խօսում, վիճաբանում էր մի խոֆթա ծերունու, Շէյխ Արիֆի հետ, տեսնելով նորեկին, դարձաւ և հարցրեց.

—Շիւքրի էֆէնդի, շինեցի՞ք ցանկը։

—Իհէլ, էֆէնդիմ, ասաց Շիւքրին, իր երկու ծնկերի վրայ պպզելով և վերարկուի (պալտօ) կոճակները կոճկել աշխատելով։ Եթէ նորին մեծապատուութիւն բէկ էֆէնդին բարեհաճէ շնորհ անել, աւելացրեց նա տաճկական շողոքորթական ձևերով ու ոճով, նրա տրկար ծառան պատրաստ է տիրոջ հրամանը կատարել։

—Ո՞նք քեզ վաղուց ենք սպասում, Շիւքրի էֆէնդի, ասաց բէկ էֆէնդի Նաղըմը. եթէ քիչ ուշանայիր, պէտք է Ահմեդը ետևիցդ ուղարկէի. համեցէք տեսնենք։

Շիւքրին մի ներքին հպարտութիւն զգաց իրա մէջ. բէկը էֆէնդի էր անուանում իրան։ Իր գրպանների մէկի անկիւնից դուրս քաշեց մի ծալած թուղթ, թքոտելով իր մատների ծայրերը, սկսաւ բանալ ծալքերը. ապա մի քանի անգամ հաղաց, սրբեց քիթը, քորեց ծոծրակը, իր ժամացոյցի արծաթեայ շղթայի կրծքից վայր կախված մասերից բռնելով՝ մէկ ակնարկ գցեց նստողների վրայ, յետոյ սկսեց կարդալ։ Նա կարդաց Ա...քաղաքի բոլոր հարուստների ցանկը, որի գլուխը գրված էր Հաջի Ա...ի անունը։ Այդ անունը լսելիս ամենքն էլ սրեցին իրանց ականջները և կիտեցին իրանց յօնքերը։ Փախրի բէկը մինչև անգամ իր քթի տակից մէկ ինչ-որ հայհոյանք մրթմրթաց։ Իսկ Շէյխ Արիֆը նահլէթ կարդաց սատանային և իր երկար ջիւբբէի երկու փէշերը ժողովելով, սկսեց խօսել։

—Գեավուրները, ասաց նա, մեծն Ալլահից մեզ յանձնված աւանդներ են։ Ալլահի Մարգարէի զօրանով նրանք ուրիշ ոչինչ չեն, եթէ ոչ ոչխարներ, որոնց բացարձակ տէրն ենք մենք՝ ընտրեալ ժողովուրդս. նրանց հովիւներն ենք. հետևաբար իրաւունք ունենք նրանց մեր կամքի համեմատ գործածելու. իրաւունք ունենք նրանց բրթերը գզելու, միսը ուտելու և հիմա մանաւանդ, նրանք, այդ անամօթ գեավուրները, որ սկսել են անարգել մեր փատիշահին, մեր կրօնքին, այդ բաներն ելը [1]), որոնց առաջ բոլորովին փակված է Մարգարէների վերջինն եղող Մուհամեդի ջէննէթի դուռը։ Այդ խը՛ղճը անհաւատներն եմ ասում, շեշտեց նա, որ ապերախտ են գտնվում այսօր իրանց պահպանող ձեռքերի դէմ. պէտք է ժամ առաջ նրանց հասկացնել, թէ ինչ է նշանակում գեավուրի ապըստամբութիւնը և թէ որ աստիճանի մեծ է մեր կրօնի խալիֆայի, սուլթանի զօրութիւնը։ Մենք դեռ չենք արել այն ամէն բաները, որ տրամադրում է Աստուծոյ փէյղամբերի գիրքը։ Նա հրամայում է ուղղահաւատութեան հրաւիրել պիղծ անհաւատներին, հակառակ պարագաներում մենք պէտք է գործածենք սուրը։ Արդէն ձեզ յայտնի է, թէ մարդ որքան գեավուր սպանէ այստեղ, այնքան հիւրիներ պիտի տրվեն իրան երկնային ջէննէթում ... Գեավուրին երբէք չէ կարելի ազատ թողնել. բաւական է որ մինչև օրս շէրիի օրէնքը ոտնակոխ արինք, ահա վնասը։ Տե՛ս, տե՛ս. հէնց որ էդ շուները մի քիչ ազատ են զգացել իրանց, համարձակվել են իրանց ծակերից դուրս հանել իրանց գլուխները, փորձեր են անում ապստամբելու իրանց բարերար սուլթանի դէմ։ Սուլթանը վաղուց զգացել է այդ բանը. նա

---

1) Տես „Ապտակի“ առաջին տարի Nrs 7 — 12 եւ երկրորդ տարի Nrs 1 — 8.

(1) Բաեա արաբական բառ է. նշանակում է հօտ։ Թիւրքերն այդ բառը փոխաբերական իմաստով գործ են ածում իրանց հալատակ քրիստոնեաների համար. իսկ իրանց անուանում են պէրաեա, որը նշանակում է ազատ. այդ բառի փոխաբերական նշանակութեան համեմատ էլ իրանց նկատում են քրիստոնեաների արածողը, հովիւը եւ միաժամանակ իրաւունք ունեն իրանց կամքի համեմատ գործածել այդ մարդկային ստրուկ հօտը։

Ծ. Հ.



ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԵՐՈՒՆԴԸ.

Ի՜նչ. մեր ծաղիկ հասակը թնդանօթը կը լափէ...
Ա՜հ, լա՜ւ. մենք այդ կընդունինք, մեր արիւնը թող թափէ.
Սարկի շղթան մենք կատենք՝ մեծցած առանց ժըպիտի,
Մեր մարց ստինքէն կաթի տեղ՝ արիւն քամեց մանկըտի:

*

Զենք ճաշակած կեանքին մէջ ուրախութիւն ու հաճոյք,
Երիտասարդ հասակի երջանկութեան այդ խնճոյք.
Մեր ճակատը դժգունած է ցաւերի հարուածէն,
Անդ դրոշմուած է զայրոյթը՝ համբոյրի տեղ սիրուածէն:

*

Ժողովրդեան մեծ սուգը մեր կրծքին վրայ ծանրացած,
Բարբարոսի վատ կամքով մեր կեանք ընկած, մանրացած,
Ատելութիւնն համբաւար մեր սրտին մէջ ծագեցաւ,
Սիրոյ քաղցը ըզգացում դեռ չը ծընած՝ յազեցաւ:

*

Մենք մեր սէրը տրուած ենք պաշտամունքի մ՚առնական —
Իրաւունքին մարդկութեան, Ազատութեանը մարդկան:
Մեր սըրտերը կը փայլին, ինչպէս ամպի սուր կայծակ,
Դրը կռուին մէջ հրացաններն մեր կորոտան համարձակ:

*

Եւ մենք կերթանք միշտ առաջ, փըշոտ ճանբան կոխելով,
Մեռած մի կեանք մէկ անմահ մահի համար փոխելով.
Նժոյգն մեր տակ կը խաղայ, փողը բարձր կը հնչէ,
Ըստրուկների ազատման աւետումը կը կանչէ:

*

Մենք կը ձգտենք դէպ տաճար, ուր կը կոչէ մեզ հնչակ,
Տաճար սիրոյ, ուր մարդկան պիտի ծագէ նոր վիճակ...
Զարկենք կռուի թմբուկներ, թող մեր յոյսը չը մարի,
Թող մեր զունատ ճակատներ փըշէ պըսակն զարդարի:

*

Լացէ՛ք, մայրե՛ր ու քոյրե՛ր, դու՛ք, որ արեան մէջ լողաք,
Դու՛ք ջարդերէն մընացած կիսակենդան. որ դողաք.
Մեզ դէպի մահ կը կանչէ մարդկութեան սուրբ նպատակ,
Ինչպէս ընկան հերոսներ իրենց անմահ դրօշին տակ:

ԽՆԹՐ.

„ՓԱԼԱՍԻ“ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ.

Այն օրէն ի վեր, ինչ գոյութիւն ունի „Հնչակը“, Մարսէյլի „Փալաս“ անուանած թերթը պարբերաբար տեսակ մը կատաղի տենդի մէջ կիյնայ և կը զառանցէ անկապ ու անիմաստ շարադրութիւններ: Այդ քրօնիկական դժբաղդ հիւանդութիւնը տարին քանի մը անգամ երևան կուգայ, կը տևէ մէկ-երկու ամիս, կրկին դադար կառնի, մի քանի ժամանակէն նորէն երևնալու պայմանով, աւելի խիստ, աւելի յուսահատական կերպարանքով: Բժիշկները շատոնց արդէն որոշած ըլլալով, որ անբուժելի տենդ մ՚է եղածը, վերջերս Ռէօդրգէնի լուսանկարչական նշանաւոր գիւտին վրայ սկսան յոյսեր տածել, որ վերջապէս կրնան ատոր օգնութեամբ իրենց պարզել „Փալասի“ հիւանդութիւնը: Յայտնի է, որ այդ գիւտով կարելի է լուսանկարել, թափանցելով մարմինը, մարդու ոսկորները... կարելի է, կրսեն, նաև՝ մարդուս ներսերը: Եւ ահա լուսանկարելով „Փալասի“ խմբագրութեան մարմինն իր բոլոր ներսերով, հետևեալը գտան.— Սրտին մէջ ժողովված է նախանձ ըսուած հիւանդութեան մաղձը, որու միքրոբները, շատ վատ տեսակէն, հոն կը վխտան անթիւ-անհամար: Փորին մէջ աղիքներու ձևով ոլորված է շշող օձ մը, որ հիւանդին պատճառ կուտայ միշտ ուրիշները ղըպարտելու, չարախօսելու, վատաբանելու, էնթրիկներ ընելու և այլն: Երեսին մորթին տակը սևերեսութիւն մը կայ, որ երեսին ոչ կարմրիլ և ոչ ճերմկնալ կուտայ: Իսկ գանգին մէջ... ՕՀ, գանգին մէջ խել մը օտարոտի բաներ կան ուղեղին հետ խառնուած: Բժիշկները յայտարարեցին, որ Ռէօդրգէնի գիւտն ալ անզօր է լուսանկարելու այդ ուղեղը, որուն մէջ տեղը միայն հնչակ մը տեսան, որ շարունակ կը զարնէ հոն և խելացնորութեան կը դատապարտէ հէքին ուղեղը...

Բժիշկներու եզրականութիւնն այն էր, որ այդ հիւանդութիւններն անբուժելի են: Իսկ անոնց լուսանկարները հրատարակել ամչցան... Հիւանդը թերևս խպնի հասարակութեան առջև... Ըսելիք չը կայ, որ բժիշկները սխալեցան իրենց այդ մանրակրկիտ ենթադրութեան մէջ... Մի բան սակայն անոնք հաստատապէս որոշեցին, հիւանդը պիտի ազատի... եթէ հնչակը ճաթի...

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՒ „ՓԱԼԱՍԱԿԱՆՆԵՐՈՒ“ ՄԷՋ.

Առաջինը.— կը յիշե՞ս, որ Սասունի դէպքերեն առաջ մեր սիրելի „Փալասը“ երեւան հանեց, որ Սասունի մէջ Հնչակեաններ կան և բառ առ բառ գրեց իր ժամանակին հետեւեալը.— „Հնչակեանները Սասնոյ անտառների կուսութիւնը կը պղծեն“:

Երկրորդ.— Այո՛, ինչպէս չէ. այդ վարպետական խօսքն այժմ անիկա ըսելու վրայ է Զէյթունի նկատմամբ ևս դարձեալ այդ... Հնչակեանների առթիւ:

Առաջինը.— Այո՛, այո՛... իրաւունք ունի... Այդ... Հնչակեանները մեր անարատ „Փալասն“ իսկ պղծուելու աստիճանին հասուցին:

արդէն գաղտնի հեռագիր է խփել ամեն կողմ, որ մեր իսլամական պարտաւորութիւնները կատարենք: Քանի որ „գեավուրի“ փորը մի քիչ կուշտ է, նա սկսում է անհանգիստ զգալ ինքն իրան. իւղոտ պատառը ցաւ է պատճառում նրանց ստամոքսներին, դրամի շատութիւնը ծանրացնում է նրանց քսակները, նրանք յիմարանում են և աջ ու ձախ կծում: Պէտք է մի քիչ թեթևացնել այդ յիմար ստրուկների քսակը և ահա նրանք իսկոյն խելօքանում են, խաղաղանում և կրկին իրանց գործերը շարունակում: Դրա առաջին փորձը մենք պէտք է անենք հէնց վաղն առաւօտ այն հաստափոր գեավուրի վրայ, որ գրաւել է ամբողջ Դաշ-Խանը: Միաժամանակ պէտք է նրա նմաններից բաւականաչափ պոկել և ահա Նրանց պալտերը էիբլագ դասակարգը (սրունքը բաց, նշանակում է աղքատ) իսկոյն կը հանդարտվէ...

Հէյլը երկար շարունակում էր. իր աչքերը մոլեռանդութիւնից փայլում էին. նա ամեն երկու երեք խօսքից յետոյ կրկնում էր „գեավուրը“ մալը դէնիզ եէմէյէն գօնուզ“ (գեավուրի ինչքը ծով է, չուտողը խոզ է): Նրա քարոզութեան ժամանակ մի քանիները լուռ ականջ էին դնում և իւրաքանչիւր հարցման իրանց գլխով հաւանութիւն տալիս, մի քանիները ննջում էին Մուհամմէդի աշակերտի այլանդակ փիլիսոփայութեան միօրինակութիւնից ձանձրացած: Միւթէսարիֆ Նաղըմ բէկը երևակայում էր Հաջի աղայի դրամարկղի վրայ: Նա արդէն լսել էր շատ առասպելական տեղեկութիւններ: Նրա քծնող ստորադրեալները, որոնք միշտ շողոքորթում էին նրան և երևակայական պատմութիւններով շլացնում այդ ագահ պաշտօնեայի աչքը, պատմել էին նաև թալիսմանական դրամարկղի մասին: Նա, այդ մոգական մնտուկը, գրված է, ասում էին նրանցից մի քանիները, Դաշ-Խանի քարէ թանձր պատերից մէկում. ոչ ոք չէ կարող նրան ջոկել պատից. նա ունի մի գաղտնի կոճակ, որի վրայ սեղմելիս՝ լսվում են խուլ և անորոշ մռնչիւններ և երկաթեայ հսկայ մնտուկը երևան է գալիս: Նրան ոչ ոք չէ կարող ձեռք տալ, ապա թէ ոչ երկու կոտոշաւոր օձեր իսկոյն կծում են համարձակողին: Այդ գեավուրն ինքը կարդում է սատանայական աղօթքներ և կողպանքն ինքն իրան բացվում է: “Ա՛խ Նրա Ներսը, Նրա Ներսը„, բացականչում էին սուլթանի պաշտօնեաները՝ ագահութիւնից շլացած. — „ամեն բան գտնվում է այնտեղ, մինչև անգամ հաւի կաթը:“

— Ասում են թէ, կրկնեց մի զինուորական բարձրաստիճան սպայ՝ իր կողը քորելով. ասում են, թէ նա ունի և քիմիայի խոտը, որը գտել է Ամիր-Դովլաթը [1]): Բահմէթլէք ճէմքեանը մեզ շատ անգամ պատմում էր այդ հմայական խոտի մասին:

— Հէնց այդ պատճառով էլ նրա դրամարկղը միշտ լիքն է ոսկիի դէզերով և թանկագին քարերով, աւելացրեց քաղաքի ոստիկանապետ Դէլի-Խուրշիդը, իր կարճլիկ մօրուքն ուղղելով.— ես մինչև անգամ տեսել եմ այսքան խոշոր ալմասներ (ադամանդ) և մարգարիտի հատիկներ, ցոյց տվեց նա իր բռունցքը՝ օդի մէջ բարձրացնելով:

— Բայց, խօսեց Նաղըմ բէկը, ասում են թէ նրա մօտ գտնվում են և սատանայի հաւկիթներ, որոնք պայթելիս ոչնչացնում են հազարաւոր մարդիկ: Ես նրանցից մինը տեսել եմ: Միանգամ տեսնէիք, շեշտեց նա աչքերը խոշոր-խոշոր բանալով, ինչ այլանդակ սև հաւկիթ էր նա. նրա վրայ ցցված էին սատանաների նոր բուսած պօղերը: Բայց նա չէր կարող վնասել, աւելացրեց նա մի քիչ ազատ շունչ քաշելով: Կուսակալը բանալ էր տվել Նրա թալիսմանը:

Սատանի հաւկիթի մասին լսելիս՝ մի սարսափ տիրեց ամենքի վրայ: Շէյխն իսկոյն Նալէթ (անէծք) կարդաց նրա անուան և իր երկու ձեռքը տանելով երեսներին, մի քանի անգամ շփեց, մի քանի կցկտուր արաբական խօսքեր մրթմրթալուց յետոյ, մէկ աջ փչեց, մէկ էլ ձախ. Նրան հետևեցին բոլոր նստողները:

— Մենք առաջ բանալ կը տանք թէ դըրամարկղի և թէ սատանայի հաւկիթների թալիսմանները, յետոյ էլ մեր ուղածի չափ կարող ենք թեթևացնել այդ գեավուրի քսակը, ասաց Բին բաշին, մի քանի անգամ իր թուքը կուլ տալով: Ճէմքեանն ասում էր, թէ, յարեց նա, այդ հաւկիթները միշտ գտնվում են իր մաղազայում. մենք ուրեմն նախ նրա տնից կըսկըսենք մեր գործը. նա հօ միշտ չէ մնում իր մաղազայում. մենք կը լրտեսենք նրան՝ և միանգամ ձեռք գցելիս՝ շուտ բանալ կը տանք թալիսմանները:

— Անպատճառ պէտք է մի քիչ կրծոտել այդ շիշման (գեր) գեավուրի ոսկորներից, պընդեց Շէյխը, կատաղութեամբ ձեռքը վեր բարձրացնելով. նա բռնե՛ է ամբողջ հրապարակը. մուսուլմանները միշտ գանգատ են անում նրա մասին. նա, այդ ստրուկը, արգելք է հանդիսանում ուղղահաւատների առևտրական գործերին: Այդ ջըփուդները կտրում են նրանց հացը:

Բաշ-քեաթիբը (առաջին քարտուղար), որ լուռ նստել էր մինչև այդ ժամանակ և լուռ ականջ էր դնում, խորը քնից զարթածի պէս սկսեց շարժվել, բերանը լայն բանալով յօրանջեց, մէկ ինչ-որ անորոշ բան մրթմրթալով իր բթի տակից, իր վրայ դարձրեց մի քանիս երի ուշադրութիւնը:

— Վերջապէս գտայ, ասաց նա կարծես ինքն իրան խօսելով և իր դէմքին տվեց մէկ ինքնաբաւական ձև,— Այն սատանի լակոտը Միհրանը միայն կարող է բանալ թալիսմանները: Հէ՛ց վաղն առաւօտը պէտք է նրան կանչել: Նա կարդացել է Մարզուանի այն Ամերիկացիների մեծ մէքթէբում (դպրոց), սովորել է նաև սատանաների գիտութիւնը, „ֆիմէրտէնը“ և վեցհաղարեակը: Յետոյ նա սքսաւ խօսել այդ շատ նշանաւոր մէքթէբի մասին, թէ ինչպէս նրանք մէկ օր այցելել էին Սեբաստիայի կուսակալ Մէհմուհ բէկի հետ: Դպրոցի

(1) Նշանաւոր հայ բժիշկ Ամասիացի ԺԵ.-րդ դարում, որի գրվածքներից երևում է, որ Փաթին Սուլթան Մուհամմէդի բժիշկն է եղած Կ. Պոլսում:
Ծ. Հ.

ՋԷՅԹՈՒՆԻ ԱՌՈՒՄԸ

Թերթերուն մէջ ժամանակին անշուշտ կարդացիք Դրան պաշտօնական զեկուցումները թէ „Զէյթունն առնուած է“։ Յետոյ այս լուրը հերքուելով՝ անշուշտ կարծեցիք թէ սուլթանը և Դուռը սուտ խօսած են, ուզած են խաբել աշխարհքը· բայց մեծապէս կը սխալիք· սուլթանը և Դուռն իրենք ալ մեծ սխալի մը զոհ գացած էին և մեծ եղաւ իրենց հիասթափումը և յուզումը, երբ ճանչցան իրենց սխալը. ահա իրականութիւնը։

Զէյթունը պաշարող տաճիկ զօրքերը չոր հաց ուտելէ սոսկիկ կը տանջուէին. Հալէպի կուսակալութիւնը տեղւոյն թուրք հարուստներուն նպաստովը 50 կողով ձիթապտուղ ղրկեց այդ կէս-անօթի զօրքերուն, որ հացի հետ ուտեն։ Երբ այս պարարտ պաշարը հասաւ պաշարողներուն՝ անոնց զօրապետը ուրախանալով անմիջապէս հետեւեալ հեռագիրը տուաւ Հալէպ։

„Զէյթունի ալտրգ“ — այսինքն „ձիթապտուղը առինք“.

Բայց Հալէպի կուսակալը կարծեց թէ „Զէյթունն“ է առնուողը և անմիջապէս հեռագրեց Դուռ և Պալատ։ Բոլոր սխալը երկու բառերուն նմանաձայնութեան մէջ էր։

ԽԱՑԹՈՒՇ

?

ՀԱՄԵՍՏ ԱԶԳԱՍԷՐ·

Իր ամեն ճառին վերջաբանութիւնը. —

„Մանկութենէս ի վեր ազգասիրական ըզգացումով եմ համակուած։ Երբ կեանքիս առաջին տասնեակն անցայ իմ ոգեշունչ քարոզներէն — դամբանականներէն — բազմութիւնը կը լացցունէի։ Երբ աղուամազ բուսաւ ծնոտիս ազգային բարձր պաշտօններ սկսայ վարել, ազգային դպրոցական ու գրական արտերը հանճարիս ոսկեզօծ հասկերով լեցուցի։ Աւելի վերջ ազգիս ամենամեծ տնձերուն հետ միատեղ մեր հայրենիքի ազատման համար այլ և այլ ձեռնարկներ ըրի։ Երբ դարձայ կատարեալ ու հասուն, աշխարհիս մէջ ալ երկիր մը, քաղաք մը, գիւղ մը, անկիւն մը մնչէ իմ համեստ խուցիս մէջ գտնուած հայելուն առջև — ամեն տեղ ճառեր և բանախօսութիւններ, բանախօսութիւններ և ճառեր արտասանեցի բազում լեզուներով, շքանշաններ ու գովասանութիւններ առի շատ և ամբողջ Եւրոպան հեղհեղեցի հայկական խնդրով, ինքս դարձած ներկայացուցիչ հայութեան և անընկճելի ու վեհ պաշտպան անոր դատին...

„Ու տեսէք այդ ամենէն վերջը ես համեստ եմ, համեստ, ինչպէս գառնուկ, համեստ, ինչպէս հայաստանցի ամաչկոտ կոյս մը, համեստ, ինչպէս անձայն առու մը, վերջապէս համեստ, ինչպէս որ ես եմ այժմ և միշտ և յաւիտեանս...“

Համեստութեան այդ ճառը վերջանալէն ետքը ունկնդիր բազմութիւնը բուռն ծափահարութիւններ նուիրեց ճառախօսին... Ընդհանուրի կարծիքն այն էր, որ յիրաւի մեծ հայրենասէրը խիստ, չափազանց համեստ գըտնուած է միշտ... և այդ պատճառաւ իր յարգն աւելի բարձրացաւ ամենուն աչքին...

— ՝՝՝՝՝՝

Հանելուկ. — Ընթերցողին կը թողուք գուշակել այդ „մեծ հայրենասէրին“ անունը։

Գուշակողին Ապտակ մը տարեկան նուէր։

Պատասխանները կընդունուին Թերթիս հասցէին։



ՄԵՐ ԿՂԵՐԱԿԱՆՆԵՐԸ

Հայ վարդապետ մը, հռչակաւոր իր աղմկայոյզ ազգասիրութեամբ, փողոցին մէջ կը հանդիպի իր բարեկամներէն մին և տխուր դէմքով՝

— Ա՜յ ինչ սոսկալի կոտորածներ, կըսէ. երանի՜ թէ Աստուած գթառատ ըլլար և այդ ամենը մեռնէին իրենց բնական մահով...

— ՝՝՝

— Այո՛, երանի՜. որովհետև այն ատեն գէթ կղերական դասը շահած կըլլար թաղումներէն...

Ու դէմքը տխուր կերպով ծռմռտկելով գրեթէ արտասուալից ձայնով յարեց.—

— Մինչդեռ այժմ այդ... կրօնական մխիթարութիւնն ալ չի կայ...

ԼՕՆԴՕՆ· „ՀՆՉԱԿԻ“ ՏՊԱՐԱՆ·

սենեակներից մէկը, ասում էր նա. լքցրել էին ամբողջ սատանայական գործիքները (ընագիտութեան վերաբերեալ գործիքներ)։ Մէկ պէտք էր տեսնէիք, թէ ինչպէս նրանցից մինը դարձնելիս դուրս էր տալիս մեծ բազմութեամբ սատանայական կարավաններ, որոնք մէկ կողմից միւս կողմ էին ցատկում և ցինքազութիւններ անում, նրանց աչքերը փայլում էին գիշերւայ մութի մէջ փայլող կատուի աչքերի նման։ Հաւատացնում եմ ձեզ, յարեց նա աւելի շեշտելով, աջուգ մաջուգի [1]) գալիք |օրերն հասել են։ Այդ ֆրէնկները սատանայի զաւակներից էլ վարպետ են. նրանք |գործածում են ոգիներին իրանց ուղած ժամանակ։

Բաշ-քեսթիպի պատմածը ուրիշ ոչինչ չէր, եթէ ոչ մի պարզ էլեքտրական մեքենայ։

Թաբու-քեսթիպին (կալուածների պաշտօնեայ) պատմեց մէկ ուրիշ, աւելի զարմանալի պատմութիւն։ Նա սկսաւ շատախօսել, թէ ինչպէս պատեհութիւն էր ունեցել մի գիշեր գտնվել այդ մէքթէբում մէկ օխաբազի (ձեռնածու) խաղերին։ Հաւատացնում եմ, աւելացրեց նա իր խօսքերին աւելի նշանակութիւն տալու համար, մի հսկայ չամթալ (երկուսի բաժանված) մօրուքով մարդ մտաւ մի պստիկ մնտուկի մէջ. կողպեցին մնտուկը և բանալին էլ վերցրին, հաստ չուաններով ամեն կողմից կապկպեցին և կնքեցին. բայց էլի այդ սադայէլի զաւակը մնտուկի ճեղքերից սողալով դուրս պրծաւ՝ առանց կողպանքը բանալու և չուանը քակելու. նա այդքանով էլ չը բաւականանալով օձի պէս նորից ներս մտաւ, չը գիտենք թէ որ տեղից։ Մենք այդ աչք կապողը (գէօղ-բայիջի) դուրս հանեցինք մնտուկից, կողպանքը բանալով։ Ես այս երկու աչքերովս տեսել եմ, կրկնեց նա իր երկու ցուցամատները աչքերի կոպերին խփելով և թիւրքական պարծենկոտութեամբ չափազանցելով։

1) Ղօրանի վարդապետութեան համաձայն աշխարհի վերջը պիտի գան այն տեսակ մարդիկ, որոնք անցնելով ասեղի ծակից, գոհութիւն պիտի տան եւ պիտի զարմանան, թէ որքան լայն դռնից դուրս եկան։ Այդ մարդկային փոշիները կոչվում են ամուգ մաջուգ, որ նշանակում է ազոգ մազոգ։ Ծ. Հ.

— Ու հէնց այդ պատճառով էլ գէօգմէն չաւուշը նրան չուզեց բանտարկել, ասաց պաշտօնեաներից մին։ Ա՜յ ջինեքա՛ զաւակը կարող էր դուրս գալ բանտի պատերից, իրան հետ տանելով ամբողջ գեավուր բանտարկեալներին։

— Գէօքմէնը շատ խելօք չաւուշ է. յարեց մէկ ուրիշը, և իրաւ որ շատ էլ խելօք մտածել է, եթէ ոչ այդ սատանայ օխապաղը կարող էր ուրիշ ցիններ սարքել նրա գլխին։

Օխաբաղի հրաշալի խաղերը, սատանայի թալխմանաւոր հաւկիթը մի ժամանակ մոռացնել տվեցին բէկ էֆէնդիներին իրանց իսկական նպատակը, մինչև որ Շէյխ Արիֆը նորից յիշեցրեց նրանց, աշխատելով վերջացնել իր ըսկսած քարոզը։

— Եթէ մենք նրանց, այդ անհաւատներին թողնենք, ասաց նա, էլի շատ կախարդութիւններ էլ կը սովորեն։ Օձը պէտք է իր հաւկիթում խեղդել, յարեց նա, բոլոր նստողների վրայ շուռ ածելով իր խորամանկ և |մոլեռանդութիւնից կամրած աչքերը՝ հասկանալու համար, թէ ինչ ազդեցութիւն են անում իր խօսքերը իր ունկնդիր բէկերի վրայ։ Տեսնելով նրանց ուշադրութիւնը, նա ինքնաբաւական դէմքով մի քիչ էլ բարձրացրեց իր խռպոտ ձայնի ատիճանը և շարունակեց։

— Էնց վաղը առաւօտեանից սկսած պէտք է գործադրել մեր նպատակը։ Նախ պէտք է կանչել տալ այն սատանայի թոռ, Միհրանը, ին ես արդէն ճանաչում եմ նրան. նա շատ ջահիլ տղայ է, մենք նրան շուտ խելքի կը բերենք... և նա իսկոյն ակամայ կը սկսի բանալ. թալխմանները։ Յետոյ մենք կարգով կը բերենք հաստափոր գեավուրներին, մէկ-մէկ նրանց մենք կը խոստովանեցնենք, նրանք էլ շուտ կը խելքանան։ Ալլահը մեր բանտապետի բազուկներին ոյժն աւելացնէ. նա շատ լաւ գիտէ, թէ այդպիսիների հետ ինչպէս է հարկաւոր վարվել։

Նազըմ բէկը խոստացաւ միւս օրը կանուխ ձեռ նարկել գործի։. նա պատուիրեց ոստիկանապետին պատրաստի ունենալ բոլոր ոստիկաններին։

— Պէտք է մեզ օգնեն նաև Բէժիի դիյ-դապաններն (մաքսախոյզ), ասաց նա։ Սալէհ Զաւուշը կը պահպանէ փողոցի անցքերը, իսկ Էֆէ-Օսմանը և սարճօշ-խալիդը իրանց խումբերով կը լրտեսեն ամեն կողմ։ Ես շատ հաւատք ունեմ այդ բարի պտուղներին վրայ։ Հայ լրտեսներն էլ կուղարկենք գեավուրներին. շուները թող երթան շների միսն ուտեն։ Իսկ պօլիս Սէյֆին իր խմբով թող գնայ Մանիսաճեանի տունը. նա շատ լաւ հոտ առնող մարդ է. քիչով էլ կարող է իր գործը գըլուխ հանել...

— Մենք բոլորս էլ վստահ ենք ձեր մեծապատուութեան վրայ, բէկ էֆէնդի, ասացին միւս պաշտօնեաները, խոնարհ գլուխ տալով նրան թիւրքական շողոքորթութեամբ.— այժմ շատ լաւ պատկերանում է մեր աչքին գործի ելքը և արդէն շատ գործերում տեսել ենք ձեր ձեռնարկութիւնների աջող վախճանը. այժմ էլ աջողութիւն ենք մաղթում Ալլահից։

Նազիմ բէկը մի քիչ շարժվեց. իր ըստորադասեալների կեղծ շաղակրատութիւնները դուր եկան նրան. իր ձեռքը տանելով սուլթանի մէջիտիէյի երրորդ աստիճանին, սկսաւ հպարտութեամբ շոյել։

Կէս գիշերը վաղուց անցել էր։ Բէկ էֆէնդիներն իրանց համար այդ խիստ հետաքրքիր խօսակցութիւնների բռնված լինելով, մոռացել էին ժամանակը։ Աքաղաղների խօսալու ձայները յիշեցրին նրանց թէ արշալոյսը մօտեցել է։ Նազըմ բէկը վեր կացաւ. նրան հետևեցին միւս պաշտօնեաներն էլ և բարի՝ գիշեր մաղթելով բաժանվեցան։

(Կը շարունակվի) ՎԻԹ.